

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի «Նոր Հաճնի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն ՀՀ կառավարության 2011թ-ի հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշման պահանջների համաձայն հայտարարում է բաց մրցույթ հետևյալ թափուր պաշտոնները համալրելու համար.

- 1.Տեղամասային թերապևտ - 1.0 դրույք
- 2.Շտապ օգնության բժիշկ – 2.0 դրույք
- 3.Վիրաբույժ (վնասվածքաբան) – 0.25 դրույք
- 4.Ներգատաբան – 0.25 դրույք
- 5.Ակնաբույժ - 0.25 դրույք
- 6.Քիթ-կոկորդ-ականջաբան- 0.25 դրույք
- 7.Ռենտգեն-ֆյուրոլաբորանտ - 0.5 դրույք
- 8.Շտապ օգնության հերթապահ բուժբույր –3.0 դրույք

ՀՀ կառավարության 2011թ-ի հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշման պահանջներով բաց մրցույթի մասնակից կարող է լինել ցանկացած անձ, որը կբավարարի ստորև նշված պահանջներին՝

1. միջին բուժանձնակազմի համար միջին մասնագիտական, իսկ բժիշկ-մասնագետների համար՝ բարձրագույն և հետբուհական կրթության առկայություն համապատասխան մասնագիտությամբ,
2. բժիշկ-մասնագետների համար հինգ տարուց ավելի աշխատանքային ստաժի առկայության դեպքում վերջին հինգ տարվա ընթացքում համապատասխան մասնագիտական կատարելագործման առկայություն,
3. Բժշկական էթիկայի կանոնների իմացություն:

Մրցույթին կարող է մասնակցել գրական հայերենին տիրապետող Հայաստանի Հանրապետության քաղաքացին, ինչպես նաև այն օտարերկրյա քաղաքացիները, ովքեր Հայաստանի Հանրապետությունում ունեն կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ, աշխատանքի թույլտվություն և ում կրթական փաստաթղթերը սահմանված կարգով ճանաչվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

### **Թափուր տեղի հավակնորդների կողմից ներկայացվում է՝**

- 1) դիմում/լրացվում է տեղում/
- 2) մեկ լուսանկար 3x4 չափի,
- 3) քաղվածք աշխատանքային գրքույկից (աշխատանքային ստաժ ունենալու դեպքում),
- 4) ինքնակենսագրություն,
- 5) անձնագրի, միջին մասնագիտական, իսկ բժիշկ-մասնագետի թափուր պաշտոնի մրցույթի դեպքում բարձրագույն և հետբուհական (ու՜մ բժշկական բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտելու ժամանակահատվածում օրենսդրությամբ սահմանվել է հետբուհական կրթության պահանջ (ինտերնատուրա, կլինիկական օրդինատուրա)) մասնագիտական կրթության որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթղթի (դիպլոմի), վերապատրաստման վկայականի (դրա առկայության դեպքում) պատճենները և բնօրինակները,
- 6) արական սեռի անձինք՝ նաև գինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը,
- 7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դիմումատուի ցանկությամբ,

8) օտարերկրյա քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ և աշխատանքի թույլտվություն:

Անհրաժեշտ փաստաթղթերը հանձնելուց հետո մրցույթի մասնակիցը կձանոթանա այն իրավական ակտերի ցանկին, որոնցից բաղկացած է լինելու հարցատոմսը:

**Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ընդունվում են** յուրաքանչյուր աշխատանքային օր՝ «Նոր Հաճնի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ում /ք.Նոր Հաճն, Տոռոզյան փողոց 4, 19-րդ սենյակ /, բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 10.00-15.00-ը:

**Գիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2018 թվականի հոկտեմբերի 12-ը:**

**Մրցույթը տեղի կունենա 2018 թվականի հոկտեմբերի 16-ին «Նոր Հաճնի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ում, ժամը 12:00-ին:**

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել «Նոր Հաճնի պոլիկլինիկա» ՊՓԲԸ -ի աշխատանքային խմբին, կամ զանգահարել 0224 4 39 65 հեռախոսահամարին:

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցույթին մասնակցելու համար քաղաքացիների ներկայացված փաստաթղթերը հետ չեն վերադարձվում: